ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/27/2022

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 1 հունիսի 2022 թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Նարեկ Համբարձումյանի և Արամայիս Փաշինյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2022 թվականի հունիսի 1-ին քննելով ՀՀ վարչական դատարանի դատավոր Անի Գրիգորի Հարությունյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում սխալ, ինչպես նաև ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու փաստերի առթիվ 2022 թվականի մայիսի 27-ի N ՎԻՎ 27/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործը

ՊԱՐԶԵՑ

I.Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, 2020 թվականի մարտի 25-ի ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածով

509

սահմանված կարգով, իրականացնելով դատավորների հայտարարագրերի վերլուծություն, պարզել է, որ.

- Անի Գրիգորի Հարությունյանը 2021 թվականի հունիսի 3-ին ներկայացված Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում տարեվերջին հայտարարագրել է 1,697,521 ՀՀ դրամ և 12. 000 ԱՄՆ դոլար անկանխիկ դրամական միջոցներ:

Մինչդեռ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Անի Գրիգորի Հարությունյանի անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին առկա է եղել 1,923,318 ՀՀ դրամ, 2,333,401 ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար և 7,771 ԱՄՆ դոլար հաշիվների մնացորդներ:

- Անի Գրիգորի Հարությունյանը Հայտարարագրի՝ «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում, հայտարարագրել է 4.66 տոկոս բաժնեմասնակցություն «Գրիար» ՓԲԸ-ում 27,900 ՀՀ դրամ արժեքով:

Մինչդեռ ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի 2021 թվականի հունիսի 29-ի թիվ N3-1454 գրության համաձայն՝ Անի Գրիգորի Հարությունյանը «Գրիար» ՓԲԸ-ում ունի 1000 բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 27,900 ՀՀ դրամ արժեքով: Բաժնետոմսերի ընդհանուր արժեքը կազմում է 27,900,000 ՀՀ դրամ:

- Անի Գրիգորի Հարությունյանը «Գրիար» ՓԲԸ-ում բաժնեմասնակցությունը հայտարարագրի՝ «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չի հայտարարագրել:

- Անի Գրիգորի Հարությունյանը Հայտարարագրի՝ «Դ. 3 Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժնում «Գրիար» ՓԲԸ-ի՝ վերջինիս պատկանող բաժնեմասը չի հայտարարագրել:

- Անի Գրիգորի Հարությունյանը Հայտարարագրի՝ «Գ. 1 Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանձ եկամուտները» բաժնում չի հայտարարագրել 2020 թվականին «Գրիար-սպասարկում» ՍՊԸ-ից և «Արս սիսթեմս»

510

ՍՊԸ-ից համապատասխանաբար 511,200 ՀՀ դրամ և 972,000 ՀՀ դրամ վարձակալությունից ստացված եկամուտները:

Մինչդեռ Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Անի Գրիգորի Հարությունյանը 2020 թվականին «Գրիար-սպասարկում» ՍՊԸ-ից և «Արս սիսթեմս» ՍՊԸ-ից համապատասխանաբար ստացել է 511,200 ՀՀ դրամ և 972,000 ՀՀ դրամ վարձակալության դիմաց եկամուտներ:

- Անի Գրիգորի Հարությունյանը «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ի բաժնեմասնակցությունը հայտարարագրի՝ «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չի հայտարարագրել:

Մինչդեռ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Անի Գրիգորի Հարությունյանը 2011 թվականի հոկտեմբերի 11-ից հանդիսանում է «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02602819) 100 տոկոսի բաժնետեր:

Վերոնշյալ ենթադրյալ իրավախախտումների հիմքով 2022 թվականի մայիսի 27-ին հարուցվել է թիվ ՎԻՎ 27/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

1.2 2022 թվականի մայիսի 27-ին Անի Գրիգորի Հարությունյանը հրավիրվել է Հանձնաժողով: Պատշաճ ծանուցված Անի Հարությունյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 28/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտումների հատկանիշներով:

1.3 Անի Գրիգորի Հարությունյանի կողմից 2022 թվականի մայիսի 26-ին Հանձնաժողով է ներկայացվել գրավոր դիրքորոշում՝ վարչական իրավախախտումների կապակցությամբ:

1.4 Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի հունիսի 1-ին, ինչի կապակցությամբ Անի Գրիգորի Հարությունյանը պատշաճ ծանուցվել է:

511

II. Վարույթի մասնակցի բացատրությունը

Անի Գրիգորի Հարությունյանը Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրությամբ, մասնավորապես, հայտնել է հետևյալը.

Հայտարարագրի՝ «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում «Գրիար» ՓԲԸ-ում 27,900 ՀՀ դրամ արժեքով 4.66 տոկոս բաժնեմասնակցության վերաբերյալ ներկայացված տվյալների կապակցությամբ հայտնել է, որ «Գրիար» ՓԲԸ-ում իր 4.66 տոկոս բաժնեմասնակցությունն արտահայտվել է 27.900 անվանական բաժնետոմսերով՝ յուրաքանչյուրը 1000 ՀՀ դրամ արժեքով, որի ընդհանուր արժեքը 2020 թվականի ընթացքում կազմել է 27.900.000 ՀՀ դրամ, սակայն վրիպակի արդյունքում (հաշվի առնելով, որ ծրագիրն ավտոմատ կերպով զրոներ է ավելացնում, փորձել է զրոները պակասեցնել) 27,900,000 ՀՀ դրամի փոխարեն նշել է 27.900 ՀՀ դրամ:

Հայտարարագրի «Բ.6.Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,697,521 ՀՀ դրամ և 12. 000 ԱՄՆ դոլար անկանխիկ դրամական միջոցներ հայտարարագրելու և ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության միջև առկա անհամապատասխանության հետ կապված Անի Հարությունյանը պարզաբանել է, որ 2020 թվականի ընթացքում իր՝ որպես պետական ծառայողի սոցիալական փաթեթի հաշվին փոխանցվել են գումարներ, որոնք տնօրինելու իրավասություն չի ունեցել՝ հաշվից օգտվելու համար համապատասխան բանկին փաստաթղթերի փաթեթ ներկայացնելու նախապայմանի պատճառով (այդ թվում, օրինակ՝ բժշկական զննություն անցած լինելու մասին տեղեկանք և այլն): Դրամական միջոցը տնօրինելու իրավասություն չունենալու պատճառով այդ գումարի չափը չի ներառվել անկանխիկ միջոցների հանրագումարում: Հնարավոր է համարում, որ իր կողմից հայտարարագրած դրամային հաշիվների մնացորդի 1,697,521 ՀՀ դրամ և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված տվյալների համաձայն՝ փաստացի առկա 1,923,318 ՀՀ դրամ դրամային հաշիվների մնացորդի տարբերությունը պայմանավորված է վերոնշյալ հանգամանքով: Իսկ դոլարային հաշվի մնացորդների առկայությամբ հայտնում է, որ ներկայացրել է դոլարային հաշիվներին առկա մնացորդների հանրագումարը՝ գումարը ամբողջացնելով՝ հաշվի առնելով, որ ծրագրով

տասնորդական կամ հարյուրերորդական թվեր նշելու դեպքում ծրագիրն ավտոմատ կերպով այն բազմապատկում է համապատասխանաբար տասով կամ հարյուրով:

Ինչ վերաբերում է «Գրիար» ՓԲԸ-ում բաժնեմասնակցությունը հայտարարագրի՝ «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չհայտարարագրելուն, այս կապակցությամբ հայտնում է, որ վերոնշյալ ընկերությունում բաժնեմասնակցությունն արդեն իսկ ներկայացված է եղել Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում, և միևնույն տվյալները հետագա բոլոր նույն տվյալների հայտարարագրումը ենթադրող բաժիններում լրացնելու անհրաժեշտությունը բացակայել է:

Անդրադառնալով «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ի բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալը հայտարարագրի՝ «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չներկայացնելուն, ապա Անի Գրիգորի Հարությունյանը բացատրությամբ հայտնել է, որ նշված ընկերության գործունեությունը 2014 թվականի ապրիլի 1-ից դադարեցված է եղել հարկային մարմին ներկայացված հայտարարության ուժով և դրանով պայմանավորված իր կողմից Հայտարարագրում համապատասխան տվյալներ չեն ներկայացվել: Վերջինիս կողմից մատնանշված փաստական հանգամանքի վերաբերյալ որևէ ապացույց չի կցվել:

Հանձնաժողովի կողմից արձանագրված այլ ենթադրյալ իրավախախտման՝ Հայտարարագրի՝ «Դ.3 Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժնում «Գրիար» ՓԲԸ-ի՝ վերջինիս պատկանող բաժնեմասը չներկայացնելու վերաբերյալ Անի Գրիգորի Հարությունյանի կողմից դիրքորոշում չի ներկայացվել:

Անի Գրիգորի Հարությունյանի կողմից Հայտարարագրի՝ «Գ.1 Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանձ եկամուտները» բաժնում 2020 թվականի ընթացքում «Գրիար-սպասարկում» ՍՊԸ-ից 511,200 ՀՀ դրամ վարձակալությունից ստացված եկամուտը չներկայացնելու առնչությամբ Անի Գրիգորի Հարությունյանը հայտնում է, որ դա անուշադրության արդյունք է, ինչի մասին դեռևս 2021 թվականի նոյեմբերի 19-ին իր դիմումով հայտնել է, խնդրելով թույլատրել ուղղում կատարել, և որ իր

դիմումը մերժվել է Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ Ե-01/1261-2021 գրությամբ:

Ինչ վերաբերում է «Արս սիսթեմս» ՍՊԸ-ից 972,000 ՀՀ դրամ վարձակալությունից ստացված եկամուտը չներկայացնելուն Անի Գրիգորի Հարությունյանը հայտնում է, որ թեև վերոնշյալ ընկերության հետ առկա է եղել վարձակալության պայմանագիր, սակայն «Արս սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից որևէ վարձավճար երբևէ իրեն չի փոխանցվել կամ առձեռն տրվել, ուստի և Անի Գրիգորի Հարությունյանը չէր էլ կարող եկամուտի վերաբերյալ տվյալ ներկայացնել Հայտարարագրի համապատասխան բաժնում:

Միաժամանակ, Անի Գրիգորի Հարությունյանը մինչև վարչական իրավախախտման արձանագրության կազմումը, միջնորդել է հնարավորություն ընձեռել իրեն ծանոթանալ վարչական վարույթի նյութերին՝ ըստ անհրաժեշտության առավել հանգամանալից դիրքորոշում ներկայացնելու համար և նիստը հետաձգելու հարցը քննարկել իր բացակայությամբ:

III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/27/22 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում՝

3.1 Անի Գրիգորի Հարությունյանը 2021 թվականի հունիսի 3-ին ներկայացված Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում տարեվերջին հայտարարագրել է 1,697,521 ՀՀ դրամ և 12. 000 ԱՄՆ դոլար անկանխիկ դրամական միջոցներ: Մինչդեռ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Անի Գրիգորի Հարությունյանի անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին առկա է եղել 1,923,318 ՀՀ դրամ, 2,333,401 ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար և 7,771 ԱՄՆ դոլար հաշիվների մնացորդներ: Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է սխալ ներկայացված տվյալ:

514

3.2 Անի Գրիգորի Հարությունյանը Հայտարարագրի՝ «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում, հայտարարագրել է 4.66 տոկոս բաժնեմասնակցություն «Գրիար» ՓԲԸ-ում 27,900 ՀՀ դրամ արժեքով: Մինչդեռ ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի 2021 թվականի հունիսի 29-ի թիվ N3-1454 գրության համաձայն՝ Անի Գրիգորի Հարությունյանը «Գրիար» ՓԲԸ-ում ունի 1000 բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 27,900 ՀՀ դրամ արժեքով: Բաժնետոմսերի ընդհանուր արժեքը կազմում է 27,900,000 ՀՀ դրամ: Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է սխալ ներկայացված տվյալ:

3.3 Անի Գրիգորի Հարությունյանը «Գրիար» ՓԲԸ-ում բաժնեմասնակցությունը հայտարարագրի՝ «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չի հայտարարագրել: Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

3.4 Անի Գրիգորի Հարությունյանը Հայտարարագրի՝ «Դ. 3 Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժնում «Գրիար» ՓԲԸ-ի՝ վերջինիս պատկանող բաժնեմասը չի հայտարարագրել: Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

3.5 Անի Գրիգորի Հարությունյանը Հայտարարագրի՝ «Գ. 1 Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանձ եկամուտները» բաժնում չի հայտարարագրել 2020 թվականին «Գրիար-սպասարկում» ՍՊԸ-ից և «Արս սիսթեմս» ՍՊԸ-ից համապատասխանաբար 511,200 ՀՀ դրամ և 972,000 ՀՀ դրամ վարձակալությունից ստացված եկամուտները: Մինչդեռ Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Անի Գրիգորի Հարությունյանը 2020 թվականին «Գրիար-սպասարկում» ՍՊԸ-ից և «Արս սիսթեմս» ՍՊԸ-ից համապատասխանաբար ստացել է 511,200 ՀՀ դրամ և 972,000 ՀՀ դրամ վարձակալության դիմաց եկամուտներ: Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

3.6 Անի Գրիգորի Հարությունյանը «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ի բաժնեմասնակցությունը հայտարարագրի՝ «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չի հայտարարագրել: Մինչդեռ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Անի Գրիգորի Հարությունյանը 2011 թվականի հոկտեմբերի 11-ից հանդիսանում է «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02602819) 100 տոկոսի բաժնետեր: Հանձաժողովը հաստատված է համարում, որ Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ վարչական դատարանի դատավոր Անի Գրիգորի Հարությունյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

4.3 Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը, տոկոսը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց

516

իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

4.4 Օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ ***արժեթուղթը և (կամ) այլ ներդրումը՝ նշելով արժեթղթի տեսակը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը*** կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն:

4.5 Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ **«Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում»** բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը, տոկոսը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

4.6 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ «Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժնում նշվում են այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որում հայտարարատու պաշտոնատար անձի ունեցած բաժնեմասը հանձնված է հավատարմագրային կառավարման, կամ հավատարմագրային կառավարչի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, պայմանագրի գործողության ժամկետը:

4.7 Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 41-րդ հոդվածի 4-րդ մասի 13-րդ կետի համաձայն՝ հայտարարագրման

517

ենթակա է վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում, իսկ նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Եկամուտը հայտարարագրելիս նշվում են՝ 1) եկամտի տեսակը, 2) եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը, հասցեն, 3) եկամտի չափը (գումարը), 4) եկամտի արժույթը:

4.8 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.10 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.11 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.12 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով ներկայացվածը ամբողջական կերպով ներկայացված է նաև հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուն հնարավորություն ունի ընտրել կոնկրետ գույքի տեսակը, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ, շահերի դեպքում՝ կազմակերպության անվանումը, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության չափը և այլ տեղեկություններ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել է հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակել այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում (2021 թվականի ապրիլի 9-ի թիվ ՎԻՎ/02/21 և 2021 թվականի մարտի 18-ի թիվ ՎԻՎ/01/21 որոշումներ):

519

Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարտուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:

Սույն գործով Անի Գրիգորի Հարությունյանը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում ***անզգուշությամբ*** ներկայացրել է հետևյալ ոչ ամբողջական և սխալ տվյալները.

1) Անի Գրիգորի Հարությունյանը 2021 թվականի հունիսի 3-ին ներկայացված Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ» ենթաբաժնում տարեվերջին հայտարարագրել է 1,697,521 ՀՀ դրամ և 12. 000 ԱՄՆ դոլար անկանխիկ դրամական միջոցներ: Մինչդեռ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Անի Գրիգորի Հարությունյանի անվամբ սպասարկվող բանկային հաշիվներին առկա է եղել 1,923,318 ՀՀ դրամ, 2,333,401 ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար և 7,771 ԱՄՆ դոլար հաշիվների մնացորդներ: Նշված արարքով Անի Գրիգորի Հարությունյանը խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջները, որոնց համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա): Հետևաբար, Հայտարարագրում առկա է սխալ ներկայացված տվյալ:

2) Անի Գրիգորի Հարությունյանը Հայտարարագրի՝ «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում, հայտարարագրել է 4.66 տոկոս բաժնեմասնակցություն «Գրիար» ՓԲԸ-ում 27,900 ՀՀ դրամ արժեքով: Մինչդեռ ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի 2021 թվականի հունիսի 29-ի թիվ N3-1454 գրության համաձայն՝ Անի Գրիգորի Հարությունյանը «Գրիար» ՓԲԸ-ում ունի 1000 բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 27,900 ՀՀ դրամ արժեքով: Բաժնետոմսերի ընդհանուր արժեքը կազմում է 27,900,000 ՀՀ դրամ: Նշված արարքով Անի Գրիգորի Հարությունյանը խախտել է Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 40-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ

կետի պահանջները, որոնց համաձայն՝ հայտարարագիրը ներառում է արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում՝ արժեթղթի և (կամ) այլ ներդրման տեսակը, գինը (արժեքը), ձեռք բերելու տարին: Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում նշել, որ խախտումը տվյալ դեպքում դրսևորվել է Հայտարարագրի՝ «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում Բաժնետոմսերի ընդհանուր արժեքի վերաբերյալ հայտարարագրման ենթակա տվյալը սխալ ներկայացնելու մեջ:

Այսպես, Օրենքի՝ 40-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավակարգավորման պահանջն է, որ **արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում տարեկան հայտարարագրում պարտադիր կերպով ներառվեն տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ** արժեթուղթը և (կամ) այլ ներդրումը՝ նշելով արժեթղթի տեսակը, **ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի** անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն:

3) Անի Գրիգորի Հարությունյանը «Գրիար» ՓԲԸ-ում բաժնեմասնակցությունը հայտարարագրի՝ «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չի հայտարարագրել: Հաշվի առնելով վարույթի մասնակցի այն դիրքորոշումը, որ «Գրիար» ՓԲԸ-ում բաժնեմասնակցությունը հայտարարագրի՝ «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չի հայտարարագրել, քանի որ վերոնշյալ ընկերությունում բաժնեմասնակցությունն արդեն իսկ ներկայացված է եղել Հայտարարագրի «Բ.3. ***Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում***, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում նշել, որ խախտումը տվյալ դեպքում դրսևորվել է Հայտարարագրի՝ «Գրիար» ՓԲԸ-ում բաժնեմասնակցությունը հայտարարագրի՝ «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում հայտարարագրման ենթակա տվյալներ չներկայացնելու մեջ: Նշված տվյալները Օրենքով սահմանված առանձին հայտարարագրման ենթակա տվյալներ են և չեն վերաբերվում հայտարարագրման ենթակա տվյալը սխալ ենթաբաժնում լրացվելուն:

Այսպես, Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ «**Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում**» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի

կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը, տոկոսը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

Հաշվի առնելով արձանագրված խախտումների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները, սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Անի Գրիգորի Հարությունյանը Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալներ: Թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք:

Այս առումով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ Հայտարարագրի «**Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ**» բաժնում ներկայացվող տվյալները հանդիսանում են այն անհրաժեշտ և համակարգային առումով փոխկապակցված տվյալները, որոնք բավարար են պաշտոնատար անձի հայտարարագրերի պատշաճ վերլուծությունն իրականացնելու համար: Նշվածից բացի, վերոնշյալ բաժնում ներկայացված տվյալներով ապահովվում է նաև պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական գույքային դրության վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, որպիսի պայմաններում գործնականում չի խաթարվում հանրային հաշվետվողականությունը: Նշվածով պայմանավորված՝ տվյալ խախտումն ունի նվազ նշանկություն, ինչը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի ուժով նշված խախտման կապակցությամբ վարչական պատասխանատվությունից ազատելու և բանավոր դիտողություն հայտարարելու հիմք է հանդիսանում:

4) Անի Գրիգորի Հարությունյանը Հայտարարագրի՝ «Դ. 3 Պաշտոն զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելը» բաժնում «Գրիար» ՓԲԸ-ի՝ վերջինիս պատկանող բաժնեմասը չի հայտարարագրել, որով խախտել է Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները, որոնց համաձայն՝ հայտարարագիրը ներառում է մասնակցությունը առևտրային կազմակերպություններում, ինչպես նաև պաշտոն

522

զբաղեցնող անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ հայտարարագրման ենթակա տվյալներ: Նշված արարքը հանդիսանում է վարչական զանցանք՝ հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված իրավակարգավորումը (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը):

5) Անի Գրիգորի Հարությունյանը Հայտարարագրի՝ «Գ. 1 Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանձ եկամուտները» բաժնում չի հայտարարագրել 2020 թվականին «Գրիար-սպասարկում» ՍՊԸ-ից և «Արս սիսթեմս» ՍՊԸ-ից համապատասխանաբար 511,200 ՀՀ դրամ և 972,000 ՀՀ դրամ վարձակալությունից ստացված եկամուտները: Մինչդեռ Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Անի Գրիգորի Հարությունյանը 2020 թվականին «Գրիար-սպասարկում» ՍՊԸ-ից և «Արս սիսթեմս» ՍՊԸ-ից համապատասխանաբար ստացել է 511,200 ՀՀ դրամ և 972,000 ՀՀ դրամ վարձակալության դիմաց եկամուտներ:

Ինչ վերաբերում է հայտարարատուի այն դիրքորոշմանը, որ նշված տվյալը փոփոխելու թույլտվությամբ դիմել է, մինչդեռ, Հանձնաժողովը թույլ չի տվել, այս առումով նշենք, որ Հայտարարագրերում փոփոխություն կատարել չթույլատրելը վերջինիս է ներկայացվել համապատասխան պատճառաբանությամբ և իրավական հիմքերով Հանձնաժողովի որոշմամբ, որը չի վիճարկվել Հայտարարատուի կողմից:

Նշված արարքով Անի Գրիգորի Հարությունյանը խախտել է Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 41-րդ հոդվածի 4-րդ մասի 13-րդ կետով և նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջները: Հետևաբար, Անի Գրիգորի Հարությունյանի Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ: Թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք:

523

Ինչ վերաբերում է Անի Գրիգորի Հարությունյանի այն միջնորդությանը, որով վերջինս խնդրել է հետաձգել 27.05.2022 թվականին վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմման օրը՝ վարույթի նյութերի ծանոթանալու և դիրքորոշում հայտնելու խախտման կապակցությամբ, Հանձնաժողովն այս առնչությամբ նշում է, որ Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված է վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության բովանդակությանը ներկայացվող պահանջները, որի շրջանակում ներառված է նաև Օրենսգրքի 267-րդ հոդվածով սահմանված վարչական պատասխանատվության ենթարկվող անձի իրավունքները: Նշված իրավունքները ներառում են նաև գործի նյութերին ծանոթանալու իրավունքը, որը վերջինս կարող էր իրացնել իր ներկայությամբ վարչական իրավախախտման արձանագրություն կազմելիս, նշվածից բացի Հայտարարատուն զրկված չէր հնարավորությունից գործի նյութերին ծանոթանալու նաև հարուցված վարույթի շրջանակում մինչև գործի քննության օրը՝ համապատասխան դիրքորոշում հայտնելու անհրաժեշտության դեպքում:

6) Անի Գրիգորի Հարությունյանը Հայտարարագրի՝ Դ. «Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի Դ.1. «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում, չի ներկայացրել: Մինչդեռ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Անի Գրիգորի Հարությունյանը 2011 թվականի հոկտեմբերի 11-ից հանդիսանում է «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02602819) 100 տոկոսի բաժնետեր:

Անդրադառնալով «ԿՐԻՍՏԱԼ ԱՐՏ» ՍՊԸ-ի բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալը հայտարարագրի՝ «Դ. Հայտարարատու Պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում չներկայացնելուն, ապա Անի Գրիգորի Հարությունյանը բացատրությամբ հայտնել է, որ նշված ընկերության գործունեությունը 2014 թվականի ապրիլի 1-ից դադարեցված է եղել հարկային մարմին ներկայացված հայտարարության ուժով և դրանով պայմանավորված իր կողմից Հայտարարագրում համապատասխան տվյալներ չեն ներկայացվել, որով կփաստվեր հաշվետու ժամանակահատվածում Ընկերության գործունեության դադարեցված լինելը: Մինչդեռ, պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն ընկերության՝ լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն, հետևաբար կարող է ցանկացած

524

պահի իրականացրած լիներ գործունեություն ամբողջ հաշվետու ժամանակահատվածում: Նշված արարքով Անի Գրիգորի Հարությունյանը խախտել է Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որոնց համաձայն՝ հայտարարագիրը ներառում է կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը, տոկոսը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն: Հետևաբար, Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի է առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին

525

մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում անզգուշությամբ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու համար Անի Գրիգորի Հարությունյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200 000 ՀՀ դրամի չափով:
2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անի Գրիգորի Հարությունյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Անի Գրիգորի Հարությունյանին տրամադրել եռօրյա ժամկետ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժիններում ուղղում կատարելու համար:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ